

— Խոլին աղէկ ըըլլար:

— Քաթրէկ տուտուն որ մէկ հատիկ անուշ շինող է — միշտ սուլու կեփէ: Անուշն ալ քիչ մը սուլու ըլլալու է, անանկ չէ մի, բնչ գիտնամ:

— Անանկ է անանկ, տէր ողորմեա, ինչու անանկ ըըլլալ, սուլուն աղէկ է.

Կը խնդրեմ, տիկիններ, այս տարի քիչ մ'ուշադրութեամբ եփեցէք ձեր անուշներն, որպէս զի գոհ ըլլան հիւրերը, Ես անուշի սիրահարներէն չեմ, բայց կուտեմ երբ հրամցնեն, Այսուամենալինիւ գող կը բըռնէ զիս երբ գգալը ձեռքս առնեմ, որովհետև կանխաւ կզգամ որ գործին մէջէն չպիտի կընամ ելնել, ասոր համար շատ անգամներ, անոյշ ուտելու ախորժակ ունեցած ժամանակս անգամ, ակռայիս կը դպչի ըսելով կը հրաժարակիմ ուտելէ: Ուստի գարձեալ կը խնդրեմ, այս տարի քիչ մ'աւելի խնամով եփեցէք որ այցելուք գոհ հութեամբ մեկնին և, ուր որ երթան, գովեստիւք խօսին ձեր անուշին վրայ: Կին մը շատ անգամ իւր շինած անուշէն կը դատուի: Աղէկ անուշեղէն եփող կին մը անպատճառ տանտիկին և կարգապահ կնիկ մ'է:

Ձեզ տեսնեմ:

Յ. ՊԱՐՈՆԻԱՆ

(Խիկար. 1887)

## ԱԽԱԼՔԸԼԸՔԻ ԾՂԵՏԸ

Անցեալ դեկտ. 19-ին, ցերեկուայ 2 ժ. 5 լոպէին երկրաշրժ եղաւ Թիֆլիզում և գաւառներում. բայց ամենից ծանր եղել է Սխալըալար քաղաքի շրջակայքում, ուր ստորերկրեայ հարուածներն այնքան զօրեղ են եղել, որ բաղաքի տներից շատերը ճեղքոտուիլ են, նորա գաւառում վնասուել են 12 գիւղեր (Կարնոյ գաւառից գաղ-

**թած)** իսկ 6 գիւղ հիմնայատակ են եղել, մօտ 600 հո-  
գի, բոլոր ինչքը և անասունները մնալով փլատակների  
տակ, Ազատուածներն էլ մնացել են բաց երկնքի տակ,  
մերկ, սոված և անօգնական:

Աղէտը հէնց որ իմացուեց՝ Թիֆլիսի պ. նահանգա-  
պետ ի. ն. Սւեչինը ուղերուոց Ախալքալակ վտանդուած-  
ների դրութիւնը բարտօքելու համար միջոցներ ձեռք առ-  
նելու, կառավարութիւնն ուղարկեց զինուորներ, որոնք պ.  
դաւաւապետի կարգադրութեամբ փլատակների տակից  
հանում են դիակներ և կենդանի մնացած մարդկանց և  
անասուններին և բաղմաթիւ կառքերով ու սայլերով ու-  
ղարկում Ախալքալակ, ուր կազմուած յատուկ մասնաժո-  
ղովը ժամանակաւոր հիւանդանոցում խնամում է ու մա-  
տակարարում բժշկական դեղեր և միջոցներ:

Ախալքալակում, Թիֆլիսում և ամենուրեք հանգա-  
նակութիւն է բացուած՝ գրամ, հայուստ, հաց և այլ նուէր-  
ներ ժողովելու և ամեն կողմից տեղում է օժանդակութիւն:

Նորին Մեծութիւն ԹԱԳԱԱՀՈՐ ԿԱՅՍԵՐԸ ամենաո-  
ղօրմածաբար հաճեցաւ նուիրաբերել վնասուածների օգ-  
տին 50,000 ռուբլի:

Մինչև այժմ եղել են հետևեալ նուիրատւութիւնները.

Մեծ իշխան Միլսայէլ նիկոլայեվիչից իւր որդիներով  
1000 ռ.

Մեծ իշխան նիկոլայ Միլսայիլովչից 500 ռուբլի:

Կովկասի Տ. Կառավարչապետից 3000 ռ. և 45,000  
պ. վարկ փոխ տալու գիւղացիներին:

Ազգիս վեհ. Հայրապետից 1000 ռ.

Միրզոյեան և ընկ. նաւթ. ընկերութիւնից 5000 ռ.

Աղելիսանեանի և ընկ. գործարանից 3500 ռ. կօշիկ  
եափնջի և այլն:

Առևտրական բանկից 3000 ռ.

Փոխ. վարկի ընկերութիւնից 1000 ռ.

Քաղաքային վարկի ընկերութիւնից 1200 ռ.

Փիթոյեան և ընկ. 1000 ռ.

Մ. Արամեանից, Մութաֆեանից և Զուբալսկից 500 ական ռուբլի:

«Տիֆլիսուի Լիստովկի խմբագրութիւնը գովելի նախանձախնդրութեամբ մի քանի օրուայ ընթացքում ժողովեց մօտ 11,000 ռ. և դարձեալ շարունակում է հանգանակութիւնը»:

Մանր նուէրներին թէ դրամով, թէ հազուստեղէնով թիւ չկայ:

Թեմիս ս. Սուաջնորդի կարգագրութեամբ գանձանակ նն պտտեցնում թեմիս բոլոր եկեղեցիներում և հին հանդերձներ ժողովում ծխերի տներից քահանաների ձեռքով:

Վրաստանի սրբ. Եկղարքոսի հրամանով գանձանակ շըշեցրին բոլոր ուղղափառ եկեղեցիներում. և այլի և այլն:

Իսկ վերջին հեռագրին նայելով Բագուի հայ հառարակութիւնը խոչոր հանդանակութեամբ հիմնում է Ըստալբակ քաղաքում մի մշտական որբանոց վնասուածների որբերի համար, որպիսի նպատակով յատուկ պատգամաւորութեամբ դիմում են արել արգէն Տ. նահանդապետին: Իսկ առ այժմ 2000 ռ. դրամով և 1000 ռ. հազուստեղէն ուղարկել են Ախալբալակ:

«Լումայի խմբագրութիւնը և ցանկալով իւր լուման ձըգել ընդհանուր գանձանակի մէջ՝ մինամակով «Տիֆլ. Լիստ.» թերթի յարգելի խմբագրութեան ուղարկեց 20 օր. 1900 թ. հայերէն պատի օրացոյց, խնդրելսկ նոցա վաճառումից գոյացած դրամը յատկացնել վնասուածների օգտին: